



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**  
**ՏԵՂԱԿԱԼ**

---

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“ ..... ” ..... 2020թ.

N.....

«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊ ընկերության  
 տնօրեն Մայքլ Դեյվիդ Ջոնսին  
 (Հասցեն՝ ք. Երևան, Ամառանցային 2/5)

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(Վարչական վարույթ հարուցելու և լուսմներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Մայքլ Դեյվիդ Ջոնս

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հուլիսի 7-ի թիվ 863-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ՝ «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լուսմները տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 20-ին ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 7-րդ հարկ, նիստերի դահլիճ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի քննության համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը

դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման  
իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Կից ներկայացվում է՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 7-ի թիվ 863-Ա հրամանը – 2 թերթ:

 Invalid signature

X 

ԼԻԼԻԱ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SHUSHANYAN LILIA 7605910584

Լ. Շուշանյան

Կատարող՝ Արթուր Դանիելյան  
Իրավաբանական վարչություն  
Հեռախոս՝ 010 51 13 14